# ՈՐՈՇՈՒՄ

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 6 մարտի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Ֆ.Թոխյանի

Զ.Ղուկասյանի

Քննության առնելով Ռուբեն Թորոսյանի դիմումի ընդունելիության հարցը

## ՊԱՐԶԵՑ

1. Քաղաքացի Ռուբեն Թորոսյանը 18.02.2009թ. դիմել է սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված դրույթի սահմանադրականության հարցը:

2.Դիմողը միջնորդում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի (ժդ) կետի հիմքով իրեն ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

3. Քաղաքացի Ռ. Թորոսյանը սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում նշում է, որ օրենքի վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 19-դ հոդվածի դրույթներին:

Ըստ դիմողի.«Սահմանադրության 19-րդ հոդվածով սահմանված «ողջամիտ ժամկետը» դա 3,5 ամիսն է: Այսինքն ստացվում է, որ սահմանադրական «ողջամիտ ժամկետ» նորմը Բարձր դատարանի համար նշանակություն չունի կամ, պարզապես, դա «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված 6 ամիսն է»:

4.«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 3-րդ մասին 3-րդ պարբերության համաձայն .«Դիմողի միջնորդության հիման վրա նրան պետական տուրքի վճարումից ազատելու հարցը սահմանադրական դատարանը լուծում է անհատական

դիմումը քննության ընդունելու հարցը լուծելու հետ միաժամանակ՝«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

Դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները սահմանված են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածով, որի ժդ) կետի համաձայն պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն ունեն. «դիմողները՝ ընտրելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով»:

Սահմանադրական դատարան հասցեագրված իր դիմումով քաղաքացի Ռ. Թորոսյանը բարձրացրել է օրենքի դրույթի սահմանադրականության հարց, որի համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածով պետական տուրքի վճարումից ազատում նախատեսված չէ:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27 հոդվածով և ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 25 հոդվածի 2-րդ մասով Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Չբավարարել պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի միջնորդությունը և դիմումի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝